

ՎԵՆԵՏԿՈՅ ԸՐԱԾ ՏՊԱԽՈՒԹԻՒՆՆ

ՀԵՆՐԻԿՈՍ ՍԻԷՆՔԻԷՎԻԶԻ ՎՐԱՅ

Իրացնէ ինչ նորորինակ քաղաք է Վենետիկ։ Չորս շաբաթէ ի վեր կը շրջիմ Ս. Մարկոսի հրապարակը, Մեն Ջրանցքը, ձիուգէկկան և լիթաւոնի յովափունքը, և սակայն միշտ կը գտնեմ հոն նոր բան մը։ Բայց մի վախճաք, չեմ ուզեր մրցանքի ելլել Բիտէլիի¹ հետ, և նկարագրել ձեզի Վենետիկոյ հրաշալիքները, իր եկեղեցիները, իր պալատները, թանգարանները, սրահները։ Ամէն ալ կը ճանչնան այս հրաշալիքները, կամ գոնէ լսած պիտի ըլլան աւտոյ վրայ խօսուիլը, կարելի չէ անոնց վրայ խօսիլ՝ առանց յիշեցնելու ամբոխին² յատկանիշ տիպարը ձևաւորարկոյ անգղիացիին, դէպ ի վեր տեղած թիթով, և կարմիր կողքով ուղեգիրք մը ձեռքը։ Նոյնպէս նաեւ ոչ նուազ եղաւան տիպարը «կիկերոնին»³, որ առաջնորդելով օտարականին Դրսական Պալատի սրահներու միջէն, կ'արտասանէ մէկ շունչով վենետիկեան նկարչներու անունները, սկսելով ձիւփանին Բելլինիէն, Տիցիանոյէն, Պաոլոյ վերոնէզէն և կը վերջացնէ Կանալետտոյով։

Ասիկայ բոլորովին ձեւակերպութիւն մ'է. և միւս կողմէն, բոտ իս, նկարագիր մը արուեստի կամ պէտք է որ խոր ուսումնասիրութիւն մ'ըլլայ, և կամ բնաւ փորձելու չէ զայն։ Ուստի ես կը նախադասեմ խօսիլ Վենետիկոյ ըրած ընդհանուր տպաւորութեան և իր կեանքին վրայ, թէ ինչպէս այն կը ներկայանայ ճամբորդին՝ առաջին նայուածքով... Ուրչափ անձինք տեսած եմ, որ Վենետիկէն դառնալով՝ յայտարարած են խաբուած ըլլալնին։ Այս անձինք իրենց մանկութենէն ի վեր լսած ըլլալով խօսուիլը վենետիկեան վեհ պալատներուն վրայ, երեւակայած են թէ Վենետիկ մէջ պիտի գտնեն չէնքեր՝ գոնէ այնպէս գեղեցիկ՝ ինչպէս են վարչախախի գլխաւոր փողոցներուն մէջ, այսինքն է՝ մաքուր սուրներ, ենթոմէ ծեփուած, ծռապակեայ մեծ պատուհաններով։

* * *

Սակայն ընդհակառակն՝ Մեն Ջրանցքի խաղաղ շրիւրու վրայէն վեր կը բարձրանան պալատներուն հիմքերը, սեւցած, ճեղքուած։ Խոսնալութիւնն գանձող ծածկեր է բծեղով, որոնք կը նմանին մողէսի երկիւրեքանգ կռակին։ Շրի մակերեսովին վրայ ձեւացած են բորբոսի հեւքեր,

որոնց վրայ կ'աճին դիրաբեկ մամուռներ և քաղաքոսներ. պատի վրայի կնածեփն կտոր կտոր եղած է, և մաւրիտանական պատուհաններու կամարներուն վրայի ատամնաձեւ զարդերն՝ աղօտացած են անձրեւներէն և սեւցած ծովէն։

Անցնինք Կա-տ'Որօներու, Բարբարիկոներու, Պոսկարիններու, Պէզարոներու, Կալէճիներու, Տիէպոլոներու, Կորնէլներու պալատներուն մօտէն, և վերջապէս անցնինք Երթմաք Ռիալտոյ չքեղ կամուրջի տակէն. ամէն տեղ նոյնն է։ Ներկայիս բոլորովին մաքած կամ աղքատացած միջնադարեան մեծ ընտանիքներու յիշատակն կը շնչէ այս պալատներու վրայէն. փեղկերն ամուր կերպով զոցուած են, և հազիւ երբեք կ'երեւի մեծ դրան աղջեւ վարձուորի մը դէմք։ Այս սեւցած և անսեթեւեթ պատերն չեմ գիտեր ինչ թափալից բռն մը ունին, իբրեւ ստուր մը արդէն մեռած անցեալի։ Բայց որքան յատկանիշ են. որքան տարբեր ուրիշ քաղաքներու մէջ տեսնուած չէղերէն։ Բաց ի սակաւաթիւ վերածնունթեան ոճի պալատներէն, վենետիկեան նախկին զոթացի ճարտարապետութիւնն բոլորովին խառնուած և ձուլուած է մաւրիտանական տեսակով։ Պատուհաններն բարձր են և նեղ, վերջացած սուր կամարով և զարդարուն առուշտաձեւով։ Իրարմէ քիչ հեռաւորութիւն ունին, բաժնուած ինչպէս քանի մը սիւնակներով, բայց աւտոյ ձեւն յատկապէս զոթացի սիւներ։ Եւելի կը նմանին նետերու տրցակներուն, որոնց վրայ կը յենու անմիջապէս կամարն։ Բաժնեղ ունին մաւրիտանական արուեստի կնիք մը, ճոխ և ծաղկեալ խոյակով։ Ամէն պատուհանի վարի կողմը կայ փոքրիկ պատշգամ մի։ Մեծ դռնէն ուղղակի կ'իջնեն ջրի մէջ քարէ ընդարձակ սանդուղիներ, որոնց առջեւ շիտակ տեղուած են երկու ցիցեր, որոնց վրայ կը կապեն զովոյդաները։ Այս աւանդին կ'իջեւ թէ կը նշէ։ Միայն անկիւններու մէջ ու երկրորդական շրանքներու բերանը կարելի է հանդիպիլ քիչ մը կենդանութեան։ Ուր մերէն դուրս ցցուած մասերուն վրայ կը բարձրանան քանի մը պատշգամներ, ծածկուած թարմ բուսականութեամբ։ Վրանածաղիկն ու քերթողական բաղեղն կը կախուին դրաստեղեւերով, և կը ծածկեն պատին ճեղքուածքը։ Եւ երբեմն միւս պատի մը վրայէն դուրս կը ցցուի թղթին սլն, և զոց օթեակներէն կը լսուին մարդկային ձայնիւր, և կամ գործիքի մը ձայնը։ Բայց համեմատութեամբ քաղաքի միւս կողմերուն՝ ընդհանրապէս Մեն Ջրանցքն աւելի հանգալուտ և լոկի է։

1. Վենետիկոյ ուղեգրի մը հեղինակն։
2. Քաղաքին մէջ օտարականները պարզեցնող։

Գողգոթաները հազիւ կը քերեն խաղաղ մակերեսովքը ջրերուն, որոնց մէջ՝ ճամբու երկայնութեամբ՝ կը ցուան պայծառափայլ պալատներու շարքերը, բոլոր սիւները, քանդակները և պատշգամբները. և մէջտեղը՝ իբրեւ հայելիի մէջ՝ կ'երեւի երկնքի պայծառ կապուտական Ո և է փոքրիկ ջրանցքով մի կրնայ անցնուիլ մեռեալ և պատմական վնեետէկէ՝ ժողովրդական վնեետէկէ։ Վերջինս բոլորովին ցանց մ'է փողոցներուն, հրապարակիկներուն և փոքրիկ ճամբաներուն այս փոքրիկ ճամբաներէն ոմանք ջրանցքներ են, ոմանք ալ սահմանուած են ողորով քալելու համար։

Բայց ինչպէս հին վնեետէկոյ՝ նոյնպէս նաեւ նորին մէջ՝ չեն գտնուիր արդի ճաշակով շինուած տուններ։ Աստուած գիտէ երբ շինուած են այս շէնքերն, որոնք հիմայ այնպէս ճաթուած, կիսակործան ու ծակծկած են, որոնց ամբողջը մէկուից առած՝ երեսովք կու տայ խոշոր արեւածի մը։ Բայց նոյն իսկ այս՝ չեմ գիտեր ինչ նշանակական ու արուեստական բան մը կու տայ իրենց։

Փողոցներն այնպէս նեղ են՝ որ եթէ մէկը երկու թւեւեր բանայ՝ բոլոր ճամբան կը գոցուի։ Տան մը բնակիչներն ոչ միայն հանգիստ կրնան խօսիլ դիմացի տան բնակիչներուն հետ, այլ նաեւ շինէ իրարու հանկէն։

Երեստաօրը մը՝ որ անն ու ճաթուած պատահանի մը պտտէն դուստ կը կարկառի՝ երեստէկոյ կու տայ արուեստական նկարի մը. վերջապէս որ կը սփտուի ճամբուն վրայ՝ կը թողու հոն հմայիչ ու խորհրդաւոր լուսատուներներ, և սեւցած պատներուն մէջտեղ երեւցող դէմքն աւելի լապապտարային գոյն կ'տանու. Որուան մէջ կ'եռայ ժողովրդական կեանքն այս փոքրիկ ճամբաներու բաւիղին մէջ։ Բաց խաւովներուն մէջ կը վճառուին պտղեղէները, ձուկերը, խեցեանքն, սոսորէները, միով բանիւ այն ամէն բան որոնք ծովու արդիւնք են։

Արած դէմքով ձկնավաճառներ, կողովը գլուխ նին՝ կը հրաւիրեն յանձարողները, և բարձրածայն կ'եղանակեն իրենց ապրանքին ընտիր յատկութիւնը։ «Պաղ ջուր» ու «Չմերուկներ», «ձմերուկներ» աղապակներն ալ կը խառնուին ձկնավաճառներու ձայներուն հետ։

Մանուկներ, կիսամերկ, սեւուկ, արեւէն այրած, և աղօղտ՝ իբրեւ փոքրիկ բոյաներ, կը խածնեն ցացը, և մասնաւոր մասնէխաղ մը կը խաղան, և կամ ողորմութիւն կը խնդրեն. իսկ կամուրջներուն վրայ կը ննջէ գործաւոր մը շուքի տակ, նկարչական կերպով առարձեւով իր կողովի անդամները։

Վնեետէկոյ մէջ ամէն բան ճամբու վրայ կը կատարուի։ Տեղ մը կերակուր կ'երեւի փոքրիկ կաթնօսայի մը վրայ. աւելի անդին՝ ճերմակեղէն կը լուան. տուններն սեմերուն վրայ նստած կը կենան քանի մը կինէ՝ կիսաբաց փորձող, և կաթ կու տան իրենց մանուկներուն. փոքրիկ հրապարակներուն վրայ, աղբիւրներուն շուրջը՝ ման-

կամարդ աղիկներ կը շատախօսեն ու կը ծիծաղեն. բոլորն ալ բարձրածայն կը խօսին, ձեռքերով ձեւեր կ'ընեն այնպիսի աշխուժով մը՝ որ շատ բնական է խտաշգիւն, և աստիճանաց անդարձաւանալու, նկարչական խմբեր կը կազմեն։ Քաղցին ամբողջ երկայնութիւնը պտտեւէն ու հարկաբաւոր փողրիկ ճամբաներ ու կամուրջներ անցնելն վերջը՝ կ'ուղղուիմ դէպ ի ծովափունքը և կը հասնիմ Աթիւտնի փառնքի վերջին ծայրը։

Մէկ կողմէն կը վերջանայ քաղաքը նեղ թեւ, բազկիկի մը մէջ, և միւս կողմէն կը տեսնուի սկիզբը Մեծ Ջրանցքին։

Աթիւտնի յովափունքն՝ նաւահանգստի կողմէն՝ իբրեւ արուարձան մ'է վնեետէկոյ Ամփիթէատրոնի ձեւով շինուած շարք մը տուններ, և քարաշէն մեծ բարձրաւանդակ ճեմելիք մը՝ քանի մը կամուրջներով միացած՝ կը գրաւեն ամբողջ ծովափունքը. շոգենաւով վնեետիկ հասնելու ատեն՝ նայուածքով մը կարելի է ընդգրկել քաղցին համայնապատկերը, թագաւորական պալատէն, փոքրիկ-հրապարակը, Կթսական պալատը և մինչև Հասարակաց պարտէզը։

Կ'երեւի թէ երբեմն յովու-Կլիսոյն կ'ուզէ իր բովանդակ գեղեցկութեամբ ցուցնել ինքզինքը ճամբորդին աչքին։ Լճակի կապուտակ ալիքներն կը թրջեն իր սփռերը, և գգուանքով կ'որոնեն գողողանքը, որոնք հաստատուն կեցած են նաւահանգստին մէջ։ Օտարականներն ընդհանրապէս կ'իջնեն այս ծովափունքի վրայ գտնուող պանդոկները, ոսկից՝ իրացնէ կարելի է վայելել հրաշալի տեսարան մը. նաւարանը, նաւահանգստը իր նաւակներով, իր շոգենաւները և իր առազատաւորները, և վերջապէս՝ հեռուն հեռուն, քողարկուած հեռաւորութենէն, կը նշմարուին Լիդոյի տունները, որոնք, կը թուին թէ վեր կ'ելլեն ջրերու մէջտեղէն, և որոնց ետեւը աչքն կ'անկեանայ ծովու և երկնքի անսահման կապուտակին մէջ։ Արեւը մոտեցու պահուն՝ նաւահանգստին կը գունաւորի հագարաւոր մելամաղձիկ և տխուր գոյներով. ոսկին, ծիրանին, արեւական, սուտակին, չափիկային կը հանգչին փոփոխիկ լճակի խաղաղ ալիքներուն վրայ և կը տատանին անհուն ցուացումներով։ Երբ վերջապէս կ'իջնէ՝ տեսարանը կը փոխուի. այն տեսնուի լուսինը կ'ուղղէ իր օգոտ ճառագայթներով Ապարտի եղեղեցին ու Խթսական պալատը, և կը տարածէ ջրերու վրայ երկայնածեւ արծաթեայ գծեր։ Հողանկաւոր սիւներու վրայէն կը կախեն գունաւոր լապտերները, և գունչոյաւորներուն վրայ կապուած հագարաւոր լուսեր՝ կը շրջեն վեր ու վար լճակին մէջ։ Այն պահուն՝ ձկնորսներն հանգչելով իրենց ամենօրեայ աշխատանքին, կը խմբուին մէկտեղ ծովափունքի բարձրաւանդակ ճեմելիքին վրայ, և կ'երգեն մինչև կէս գիշեր։ Մարդկային ամբուրն, գլուխք ու գրեթէ արբեցած՝ գիշերուան ու քաղցին հմայքին՝ կը շարձալայէ թագաւորական-Պարտէզին ու փոքրիկ

Հրապարակին մէջտեղ: Փոքրիկ-Հրապարակն իբրու գաւիթն է Ս. Մարկոսի Մեծ-Հրապարակին: Իր կողերէն մին կը կազմէ Դրսական պալատի որմն, վերամբարձուած կամարայորկերով ու կամարներով. միւս կողմէն կանգնուած է Պալատապետներու շէնքն. իսկ իր մուտքին վրայ բարձրացած են երկու ահագին խարիսխներ, իւրաքանչիւրն շինուած հառաքարէ: Մշակող-մեանին վրայ կայ Վենետիկ Թուաւոր Առիծն, իսկ ձախակողմեանին վրայ Ս. Թէոդորի արձանն:

* * *

Կը կրկնեմ անգամ մ'ալ. Փոքրիկ-Հրապարակը գաւիթն է՝ աշխարհիս ամենն մեծ դարձեցին, և այս գահլիճն է Ս. Մարկոսի-Հրապարակն: Իր պատերէն երեքը ձեւացած են Պալատապետներու որմնով. չորրորդն, ամենէն գեղեցիկը և փառաւորը, կը կազմէ այն շնչախարիկ շէնքը, բոլորովին մարմարեայ և մուգայիւներով շինուած, որ է Եկեղեցին Ս. Մարկոսի:

Դժուարին է գտնել Եւրոպայի մէջ ուրիշ հրապարակ մ'ալ՝ որ կարենայ մրցիլ Ս. Մարկոսի հրապարակին հետ: Պալատապետներու ագնուական պարզութիւնը դուրս կը ցատքի Եկեղեցւոյ ամենաճոխ գարդարանքներուն մէջ. և աչքն յոգնած ուղիղ գծերէն՝ կը հանգչի հաճախով կամարներուն վրայ, ոսկէզօծ որմախորշերուն վրայ և Սրբաբանին աշտարակներուն վրայ, որուն չքեղութիւնը աչքի պիտի զարնէր գերազանցօրէն՝ եթէ գտնուէր ուրիշ շրջանակի մը մէջ: Նոյնպէս Հրապարակն ունի ինքն իրեն մէջ եզական յատկանիշ մը: Հոս չկայ փոշի. չեն տեսնուիր փառաւոր կամ հասարակ կառքեր, ձիեր. չի լսուիր անիւներու շառաչիւն, այլ ընդ հակառակն՝ դէպ ի կամարներուն մօտ գտնուող հրապարակին բովանդակ մասը գրաւած են փոքրիկ սեղաններ և աթոռներ, որ կը հանգչեցուի իբրու դահլիճի մը մէջ:

Իրիկուրը Ս. Մարկոսի հրապարակն համախմբման տեղ է Վենետիկ բովանդակ չքծ աւբոխին համար: Ով որ չուզեր տուն ծնալ, պէտք է որ հոս գտնուի: Հոս կու գան երաշխութիւն լսելու, հոս կը խմեն պուտ պուտ զովաջուցիչ ըմպելիքներ, կը շրջապային, կը դիտեն անցորդները, կ'ընկերանան տիկիներու: Կը հանդիպին որոնց որ կ'ուզեն հանդիպիլ ու կը ծանօթանան. վերջապէս հոս այնպիսի է մարդ՝ ինչպէս թէ հասարակաց պարահանդէսի մը մէջ գտնուի: Երաշխութեան ձայներն, հովաքարներու աղմուկն դեռ աւելի կ'ուռնցնեն պարահանդէսի մը մէջ գտնուելու պատրանքը: Միայն, երբ մարդ աչքերը վեր կը վերցնէ ու կը տեսնէ երկիւզի սեւ ենթապային վրայ փայլիւր բիւրաւոր աստղներուն, այն ատեն կ'իմանայ թէ դահլիճի մը մէջ չէ, այլ ճամբու վրայ:

Օրուան մէջ նուազ արժուով կայ. միայն աղանձներու երանքներ վեր վար կ'երթան հրապարակին մէջ: Այս աղանձներն չափազանց ընտանի են, այնչափ որ կու գան կը հանգչին ան-

երկիւղ մինչեւ անգամ մարդիկներու ուտերուն և ձեռքերուն վրայ որոնք կը նետեն անոնց առջեւ ցորենահատ. և մինչեւ անգամ կու գան կը կենան ուղեգրքին վրայ այն տարաբաններուն, որոնք կ'երթան այցելելու Եկեղեցին կամ Դրսական պալատը:

* * *

Դրսական պալատը մարիտանական ոճով է. և կրնայ կոչուիլ մարմարեայ թրոնիոնն Վենետիկ: « Եկեղեցուն » կ'առաջնորդէ ճամբորդին հրաշալի գաւթի մը մէջ, ուր հին ատեն՝ կարասիքի բխումը, որ կը հաւաքէր « ամբարտաւանութիւններ », յետոյ Հնկայից սանդղակէն վեր կը հանէ սինապատ ու կամարակապ սրահներու մէջ. քի վերջէ՝ կը ցուցնէ շարք մը դահլիճներու՝ զարդարուած Վենետիկեան ամենէն նըշանաւոր նկարչիներու նկարներով ու պատկերներով, և մասնաւորապէս Պաւլոյ Վերոնէզէի ու Տինտորետտոյ: Այս դահլիճներէն իւրաքանչիւրն միաշաժմայն է պատմական յիշատակաւրան և արուեստի գործ մը: Հոս կը նստէր պատրիկներու սինկլիտոսն, հոս կ'ընդունէին դեսպանները, հոս կը գումարուէր զարհուրեցի ժողովն Տասանց, և որ մեծն է՝ հոս կը խմբուէր աւելի սարսփալիկ էրից ժողովն:

Երից ժողովին դահլիճն դուրս կ'ենուի ծածուկ դռնով մը, և անցնելով քանի մը նորուղիներէն՝ կ'անցնուի « Հառայանաց կամուրջէն », և կ'իջնուի բանտերը: Առաջնորդն կու տայ մեր ձեռքը ջահ մը, և քանի մը փոքրիկ նեղ սանդղակներէ կ'իջնենք գետինն տակ, ուրկից կ'արտաշնչէ խոնաւութիւն և բոբոբի հոտ: Գանդութիւն մը կը ընչէ մարդուս կուրծքը երբ կը տեսնէ այն քարէ որջերը, ցած մուտքերով, առանց պատուհանի, առանց լոյսի ու առանց օդի: Ժամանակն ու յառաջագիմութիւնն զանոնք դատարկն է իրենց զոհերէն, բայց չեն կրցած ջնջել անոր վրայէն անգթութեան ու սարսփի կնիքը: Այլառաժի երեւուն լուսաստուերներն կարծես թէ կը լուսաւորեն սեւ պատերուն վրայի արեան բիծերը, և առաջնորդին ցած ձայնն կ'արթնցնէ պատմական տխուր յիշատակները: Հոս կը տառապէր Ֆլոսպին, հոս Մարիոյ Ֆալիբոյ, հոս գիշատեցին գինքը. հոս կը խոտովանցնէին զոհերը. և քարի մէջ մասնաւոր շինուած ծակէ մը՝ անոնց արիւնը կը վազէր կ'երթար Ջրանցքին մէջ: Այս ամէնն երազ մը կ'երեւի ճամբորդին և կամ զգայուն զարդարանք մը Վիկտոր Հիւկոյի մէկ թատերախաղին, և սակայն այս ամէնն պարզ իրականութիւն է, որուն կ'անցնուի ուղղակի Պալատի ոսկէզօծ սենեակներէն: Եւ այն պահուն մարդը զգացում մը կ'ունենայ՝ թէ ալ բաւական է տեսնելիս դահլիճներ, բանտեր և ամբողջ պալատ, ու կը գոչէ հոգւոյն խորէն. « Որհնեալ ըլլայ յառաջագիմութիւնն որ փակեց ցմիշտ արեան այդ զգուշի գիրքը՝ մարդապալ կահիճներուն »:

Թարգմ. Վերոնիկ